

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ  
Օ Ր Ե Ն Ս Գ Ի Ր Ք**

*(Ընդունված 2000 թվականի հուլիսի 6-ին)*

**Հոդված 128. Ապրանքների և տրանսպորտային միջոցների  
հայտարարագրումը**

1. Ապրանքները և տրանսպորտային միջոցները, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, ենթակա են հայտարարագրման տարածաշրջանային կամ մասնագիտացված մաքսատներում կամ մաքսային կետերում վերադասմաքսային մարմնի սահմանած կարգով, եթե՝

ա) դրանք տեղափոխվում են Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով.

բ) փոփոխվում է դրանց նկատմամբ կիրառվող մաքսային ռեժիմը.

գ) **(ենթակետն ուժը կորցրել է 21.08.08 ՀՕ-155-Ն)**

դ) դրանք ենթակա են հայտարարագրման՝ սույն օրենսգրքի 135-րդ հոդվածի համաձայն.

ե) դրանք հանդիսանում են «Ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» և «Ժամանակավոր արտահանում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմներով տեղափոխված ապրանքների վերամշակումից առաջացած թափոններ կամ մնացորդներ:

2. Հայտարարագրումն իրականացվում է վերադաս մաքսային մարմնի սահմանած ձևով՝ թղթային, բանավոր, էլեկտրոնային եղանակներով, կամ գործողությամբ՝ ներկայացնելով ճշգրիտ տեղեկություններ ապրանքների և տրանսպորտային միջոցների, դրանց տեղափոխման նպատակի մասին, ինչպես նաև՝ մաքսային հսկողության և ձևակերպման համար անհրաժեշտ այլ տեղեկություններ:

Թղթային եղանակով հայտարարագրումն իրականացվում է վերադաս մաքսային մարմնի սահմանած հայտարարագրի ձևի լրացված օրինակը մաքսային մարմին ներկայացնելու միջոցով: Հայտարարագիրը պետք է

ստորագրված լինի և պարունակի բոլոր այն տեղեկությունները, որոնք պահանջվում են ընտրված մաքսային ռեժիմի շրջանակներում:

Բանավոր եղանակով հայտարարագրման ժամանակ անձանց կողմից մաքսային մարմիններին բանավոր հայտարարվում են տեղեկություններ տեղափոխվող ապրանքների վերաբերյալ: Բանավոր եղանակով հայտարարագրված տեղեկությունները հաշվառվում են վերադաս մաքսային մարմնի սահմանած դեպքերում և կարգով:

Գործողությամբ հայտարարագրումն իրականացվում է մաքսային սահմանը հատելու պահին առանց հայտարարատուի կողմից որևէ հայտարարության ներկայացման՝ վերադաս մաքսային մարմին ներկայացված՝ սույն օրենսգրքով սահմանված նախնական տեղեկատվության հիման վրա: Եթե տեղափոխվող ապրանքների կամ տրանսպորտային միջոցների վերաբերյալ նախնական տեղեկատվություն չի ներկայացվել, ապա գործողությամբ հայտարարագրումն իրականացվում է սահմանային անցակետում՝ Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսդրությամբ պահանջվող մաքսային հսկողության համար անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացմամբ: Գործողությամբ հայտարարագրման դեպքում մաքսային վճարներ չեն գանձվում:

Էլեկտրոնային հայտարարագրումը մաքսային մարմիններ վերադաս մաքսային մարմնի սահմանած ձևով և կարգով տեղեկատվության ներկայացումն է:

Կանխիկ Հայաստանի Հանրապետության արժույթի կամ արտարժույթի կամ ըստ ներկայացնողի արժեթղթերի հայտարարագրման դեպքում նշվում են նաև տեղեկություններ դրանք ձեռք բերելու աղբյուրի վերաբերյալ: Ըստ ներկայացնողի արժեթղթերի հայտարարագրումն իրականացվում է Կենտրոնական բանկի սահմանած կարգով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնի համաձայնությամբ:

3. Ապրանքները, անկախ իրենց քանակից և բնույթից, կարող են հայտարարագրվել մաս-մաս, սույն օրենսգրքով սահմանված ժամկետում, այդ թվում՝ նաև տարբեր մաքսային ռեժիմներով, եթե օրենքով և այլ իրավական ակտերով այլ բան նախատեսված չէ:

Ապրանքները հայտարարագրվում են արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկում ընդգրկված՝ իրենց նկարագրին համապատասխանող ծածկագրերով: Եթե մեկ խմբաքանակում գտնվող ապրանքները դասվում են ԱՏԳ ԱԱ տարբեր ծածկագրերի այնպես, որ հայտարարատուի կատարած հաշվարկի համաձայն դրանց հայտարարագրման հետ կապված ծախսերը համադրելի են կամ գերազանցում են վճարման

ենթակա մաքսայինվճարները, ապա հայտարարատուի գրավոր դիմումի հիման վրա մաքսային մարմինները կարող են թույլատրել այդ ապրանքները հայտարարագրել՝ դասելով այն ապրանքի ծածկագրին, որի համար սույն օրենսգրքով նախատեսված է մաքսատուրքի առավելագույն դրույքաչափը: Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանվում են սույն պարբերությամբ սահմանված դրույթի կիրառման դեպքերը և հայտարարագրվող ապրանքների տեսակները և բնահիրային չափերը:

4. Էլեկտրոնային եղանակով

ներկայացված մաքսային հայտարարագիրը մաքսային մարմինների կողմից ընդունվելուց հետո համարվում է մաքսային հսկողության համար անհրաժեշտ իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթուղթ:

5. Էլեկտրոնային հայտարարագրի ներկայացման

ժամանակ մաքսային հսկողության ձևերի ընտրության նպատակով մաքսային մարմինները կիրառում են դիսկերի կառավարման համակարգի վրա հիմնված ընտրողականության սկզբունքը:

**(128-րդ հոդվածը լրաց. 24.12.04 ՀՕ-66-Ն, 26.02.07 ՀՕ-125-Ն, փոփ., լրաց. 21.08.08 ՀՕ-155-Ն, 22.12.10 ՀՕ-25-Ն, խմբ., լրաց. 20.05.14 ՀՕ-46-Ն, լրաց. 21.06.14 ՀՕ-117-Ն)**

**Հոդված 133. Մաքսային նպատակների համար ներկայացվող փաստաթղթերը և այլ տեղեկությունները**

1. Հայտարարագրման ժամանակ մաքսային մարմիններ ներկայացվում են մաքսային նպատակների համար պահանջվող փաստաթղթեր և տեղեկություններ:

2. Մաքսային մարմինները հայտարարատուից իրավունք ունեն պահանջել միայն հայտարարագրման ենթակա տեղեկություններ և մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման վերաբերյալ այնպիսի փաստաթղթեր, որոնք թույլ են տալիս ճշտել այդ տեղեկությունները:

3. Սույն հոդվածի 2-րդ կետում նշված տեղեկություններից և փաստաթղթերից բացի, սույն օրենսգրքով և այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում, մաքսային մարմիններն իրավունք ունեն պահանջել այլ տեղեկություններ և փաստաթղթեր:

**Հոդված 134. Մաքսային հայտարարագրի ներկայացումը և ընդունումը**

**(վերնագիրը լրաց. 24.12.04 ՀՕ-66-Ն)**

1. Հայտարարատուն մաքսային հայտարարագիրը ներկայացնում է մաքսային մարմին թղթային եղանակով հայտարարագրման դեպքում կամ հայտարարագրման ավտոմատ համակարգի միջոցով՝ էլեկտրոնային հայտարարագրման դեպքում:

Ներկայացված մաքսային հայտարարագիրը գրանցվում է մաքսային մարմնում, որի կապակցությամբ թղթային եղանակով հայտարարագրման դեպքում մաքսային մարմնի, իսկ էլեկտրոնային հայտարարագրման ժամանակ հայտարարագրման ավտոմատ համակարգի կողմից մաքսային հայտարարագրի վրա նշվում են գրանցման հերթական համարը և գրանցման ամսաթիվը, ամիսը, տարին:

2. Գրանցված մաքսային հայտարարագիրն ընդունելուց առաջ մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից՝ թղթային եղանակով հայտարարագրման դեպքում, կամ հայտարարագրման ավտոմատ համակարգի կողմից՝ էլեկտրոնային հայտարարագրման դեպքում, իրականացվում է մաքսային հայտարարագրի լրացման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգի պահպանման ճշտության ստուգում: Գրանցված հայտարարագրում անհամապատասխանություն հայտնաբերվելու դեպքում մաքսային մարմինը բանավոր կամ հայտարարագրման ավտոմատ համակարգի միջոցով տեղեկացնում է հայտարարատուին նշվածի վերաբերյալ, որի կապակցությամբ հայտարարատուն ներկայացնում է ուղղված հայտարարագիր՝ կատարելով համապատասխան փոփոխություններ և (կամ) լրացումներ:

Հայտարարատուի ստորագրած թղթային կամ էլեկտրոնային մաքսային հայտարարագիրն ընդունվում է մաքսային մարմնի կողմից, որի կապակցությամբ հայտարարագրին տրվում է ընդունման հերթական համար, և նշվում են ամսաթիվը, ամիսը և տարին: Էլեկտրոնային եղանակով մաքսային հայտարարագիր ներկայացնելու դեպքում հայտարարատուն պարտավոր է հայտարարագրի ներկայացման ժամանակ ավտոմատ հայտարարագրման համակարգի միջոցով ծանուցում ներկայացնել մաքսային մարմին՝ հայտարարագրված ապրանքները և մաքսային հսկողության համար անհրաժեշտ փաստաթղթերը մաքսային մարմնի պահանջով զննման ներկայացնելու պատրաստակամության վերաբերյալ:

Հայտարարագրի ընդունումից հետո ռիսկերի կառավարման համակարգի միջոցով իրականացվում է մաքսային հսկողության ուղու ընտրություն:

Թղթային եղանակով ներկայացված մաքսային հայտարարագրերը մաքսային մարմնի կողմից ներմուծվում են հայտարարագրման ավտոմատ համակարգ՝ ընդունվելուց հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

3. Մաքսային հայտարարագրի ընդունման պահից այն համարվում է իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթուղթ:

4. Մաքսային մարմինը մերժում է արժույթային արժեքների և ըստ ներկայացնողի արժեթղթերի վերաբերյալ ֆիզիկական անձի լրացրած մաքսային հայտարարագրի ընդունումը, եթե դրանում բացակայում են օրենսդրությամբ կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված լրացման համար պարտադիր տեղեկություններ:

*(134-րդ հոդվածը լրաց., խմբ. 24.12.04 ՀՕ-66-Ն, փոփ. 30.04.08 ՀՕ-56-Ն, խմբ. 20.05.14 ՀՕ-46-Ն, լրաց. 21.06.14 ՀՕ-117-Ն )*

### **Հոդված 135. Մաքսային հայտարարագրում փոփոխություններ և լրացումներ կատարելը, մաքսային հայտարարագրի անվավեր համարումը**

1. Մաքսային հայտարարագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել մինչև դրա ընդունումը, ինչպես նաև սույն հոդվածով սահմանված դեպքերում՝ ընդունումից հետո:

Մաքսային հայտարարագրի ընդունումից հետո մինչև մաքսային հսկողության ուղու ընտրությունը հայտարարագրի մեջ սխալներ կամ անճշտություններ հայտնաբերելու դեպքում հայտարարատուն կարող է միջնորդություն ներկայացնել մաքսային հայտարարագիրն ընդունած մաքսային մարմին՝ հայտարարագրում համապատասխան փոփոխություններ կատարելու համար և կատարել փոփոխությունները: Մաքսային հայտարարագրում փոփոխություն կատարելու կարգը և փոփոխման ենթակա տվյալների ցանկը սահմանում է վերադաս մաքսային մարմինը:

2. Եթե մաքսային մարմինների կողմից իրականացված հսկողության արդյունքներով պարզվում է, որ տեղափոխվող ապրանքների և (կամ) տրանսպորտային միջոցների վերաբերյալ հայտարարագրված տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը, ապա՝

ա) եթե կան մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործերի վարույթ սկսելու հիմքեր, ապա մաքսային մարմինը սկսում է մաքսային կանոնների

խախտման վերաբերյալ գործի վարույթը: Մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործի քննման արդյունքում սույն օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված որոշում ընդունած պաշտոնատար անձը՝ սույն հոդվածի 5-րդ կետով նախատեսված հիմքերի առկայության դեպքում, որոշումն ընդունելուց հետո՝ առնվազն մեկ աշխատանքային օրվա ընթացքում, մաքսային հայտարարագրի անվավեր համարման միջնորդություն է ներկայացնում մաքսային մարմնի ղեկավարին:

բ) եթե մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործերի վարույթ սկսելու հիմքեր չկան, ապա հայտարարագիրն անվավեր է համարվում սույն հոդվածի 5-րդ կետում նշված հիմքերի առկայության դեպքում՝ սույն հոդվածի 6-րդ կետին համապատասխան:

գ) մաքսային մարմինները կարող են որոշում կայացնել մաքսային հայտարարագրում փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու մասին:

3. Ընդունված մաքսային հայտարարագիրն անվավեր համարելու խնդրանքով հայտարարատուն կարող է դիմել մաքսային հայտարարագիրն ընդունած մաքսային մարմին:

4. Հայտարարագրի անվավեր համարման դիմումն ստանալու հաջորդ օրը, եթե սույն հոդվածի 2-րդ կետի համաձայն մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործի վարույթ չի սկսվել, ապա մաքսային մարմնի ղեկավարը կայացնում է հայտարարագրի անվավեր համարման մասին որոշում, իսկ եթե դիմումի ուսումնասիրման արդյունքում չեն բացահայտվում ընդունված մաքսային հայտարարագրի անվավեր համարելու՝ սույն հոդվածի 5-րդ կետում նշված հիմքերը, ապա դիմումը մերժվում է՝ գրավոր ներկայացնելով մերժման պատճառները:

5. Մաքսային հայտարարագիրը կարող է անվավեր համարվել կամ փոփոխվել, եթե ընդունված մաքսային հայտարարագրում կա անճշտություն կամ սխալ, կամ հայտարարագրված ապրանքները և (կամ) տրանսպորտային միջոցները փաստացի չեն տեղափոխվել Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով, և այդ հանգամանքը հանգեցրել է կամ, հայտարարագիրն անվավեր չհամարելու կամ չփոփոխելու դեպքում, կարող է հանգեցնել մաքսային կանոնների խախտման:

6. Մաքսային հայտարարագիրը կարող է փոփոխվել հայտարարատուի և մաքսային մարմնի փոխհամաձայնության դեպքում մաքսային մարմնի կամ հայտարարատուի կողմից՝ վերադաս մաքսային մարմնի սահմանած կարգով, կամ հայտարարատուի և մաքսային մարմնի փոխհամաձայնության դեպքում անվավեր ճանաչվել մաքսային մարմնի կողմից, ինչպես նաև դատական կարգով:

7. Անվավեր համարված հայտարարագրերը վերադաս մաքսային մարմնի սահմանած կարգով հանվում են փաստաթղթաշրջանառությունից և տվյալների բազայից:

**8. Եթե անվավեր**

համարված մաքսային հայտարարագիրը մաքսային մարմիններին ներկայացված է եղել Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով փաստացի տեղափոխված ապրանքների և (կամ) տրանսպորտային միջոցների համար, ապա հայտարարատուն պարտավոր է այդ ապրանքների և (կամ) տրանսպորտային միջոցների համար ներկայացնել

նոր մաքսային հայտարարագիր՝ մաքսային հայտարարագիրն անվավեր համարելու օրվան հաջորդող տասնօրյա ժամկետում, ընդ որում, մինչև նոր մաքսային հայտարարագրի հիման վրա բացթողումն անվավեր համարված մաքսային հայտարարագրով հայտարարագրված ապրանքները և (կամ) տրանսպորտային միջոցները գտնվում են մաքսային հսկողության տակ:

9. Հայտարարագրված ապրանքների և տրանսպորտային միջոցների բաց թողնումից հետո մաքսային մարմինների ընդունած մաքսային հայտարարագիրը կարող է անվավեր համարվել (ամբողջությամբ կամ մասնակի), փոփոխվել և (կամ) լրացվել՝ վերադաս մաքսային մարմնի սահմանած կարգով:

*(135-րդ հոդվածը խմբ. 24.12.04 ՀՕ-66-Ն, խմբ., փոփ., լրաց. 21.08.08 ՀՕ-155-Ն, 20.05.14 ՀՕ-46-Ն)*

**Հոդված 136. Ապրանքների և տրանսպորտային միջոցների հայտարարագրման պարզեցված կարգը**

Մաքսային ձևակերպումների կատարելագործման նպատակով վերադաս մաքսային մարմինը կարող է սահմանել ապրանքների և տրանսպորտային միջոցների հայտարարագրման պարզեցված կարգ:

**Հոդված 137. Նախնական հայտարարագրումը**

1. Մինչև ապրանքները և տրանսպորտային միջոցները Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխելը հայտարարատուն կարող է կատարել դրանց նախնական հայտարարագրում, ինչը ենթակա է ճշգրտման՝ ապրանքները և տրանսպորտային միջոցները Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխելուց հետո:

2. Նախնական հայտարարագրման դեպքերը և կարգը սահմանում է վերադաս մաքսային մարմինը:

**Մաքսային մարմինները որպես արժութային  
Հոդված 154. վերահսկողության գործակալներ**

1. Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինները համարվում են արժութային վերահսկողության գործակալներ:

2. Արժութային հսկողություն իրականացնելիս մաքսային մարմինների՝ սույն հոդվածով նախատեսված գործառույթները և լիազորությունները որոշվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով:

**Հոդված 155. Մաքսային մարմինների իրավասությունն արժութային  
հսկողություն իրականացնելիս**

Հայաստանի Հանրապետության մաքսային մարմիններն արժութային հսկողություն են իրականացնում անձանց կողմից Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով արժութային արժեքների տեղափոխման նկատմամբ:

Մաքսային մարմինները Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ոսկու, այլ թանկարժեք մետաղների կամ թանկարժեք քարերի անսովոր տեղափոխումների դեպքում պետք է միջազգային պայմանագրերի հիման վրա, իսկ դրանց բացակայության դեպքում՝ փոխադարձության հիման վրա, սեփական նախաձեռնությամբ կամ հարցման հիման վրա տեղեկացնեն դեպի Հայաստանի Հանրապետություն այդ ապրանքների արտահանման և (կամ) Հայաստանի Հանրապետությունից այդ ապրանքների արտահանման երկրի մաքսային կամ այլ իրավասու մարմիններին, ինչպես նաև համագործակցեն այդ մարմինների հետ՝ այդ ապրանքները ձեռք բերելու աղբյուրը, արտահանման երկիրը և տեղափոխման նպատակը պարզելու և համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու նպատակով:

*(155-րդ հոդվածը փոփ. 26.02.07 ՀՕ-125-Ն, լրաց. 21.06.14 ՀՕ-117-Ն)*



## **Հոդված 155.1. Ահաբեկչության հետ կապված անձանց գույքի սառեցումը**

1. Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերով կամ դրանց համաձայն կամ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազոր մարմնի հրապարակած ցանկերում ընդգրկված ահաբեկչության հետ կապված անձանց անունների հետ արժույթի կամ ըստ ներկայացնողի արժեթղթերի՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխում իրականացնող անձանց անունների համընկնումների դեպքում մաքսային մարմինը պետք է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով անմիջապես որոշում կայացնի այդ անձանց գույքն անորոշ ժամկետով սառեցնելու մասին:

*(155.1-րդ հոդվածը լրաց. 21.06.14 ՀՕ-117-Ն)*

## **Հոդված 156. Մաքսային մարմինների կողմից արժույթային հսկողություն իրականացնելը**

1. Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինների կողմից իրականացվող արժույթային հսկողությունը մաքսային հսկողության բաղկացուցիչ մասն է:

2. Հայաստանի Հանրապետության մաքսային մարմիններն արժույթային հսկողություն իրականացնում են սույն օրենսգրքին և Հայաստանի Հանրապետության արժույթային օրենսդրությանը համապատասխան:

3. Արժույթի կամ ըստ ներկայացնողի արժեթղթերի ներմուծման, արտահանման, ինչպես նաև տարանցիկ փոխադրման դեպքերում մաքսային մարմինները պետք է տեղեկություններ ներկայացնեն «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված լիազոր մարմին՝ վերջինիս սահմանած կարգով:

4. Մաքսային մարմիններն առնվազն 5 տարի ժամկետով պետք է պահպանվեն արժույթի կամ ըստ ներկայացնողի արժեթղթերի գումարի և դրանք տիրապետողներին նույնականացնող տեղեկություններն այն դեպքերում, երբ ներմուծման, արտահանման, ինչպես նաև տարանցիկ փոխադրման վերաբերյալ՝

1) սահմանված հայտարարագիր է ներկայացվում մաքսային մարմիններ.

2) ներկայացվում է ոչ ճշգրիտ տեղեկություններով հայտարարագիր, կամ խախտվում են փոխադրման արգելքի վերաբերյալ սահմանված պահանջները.

3) կասկածներ են առաջանում փողերի լվացման և (կամ) ահաբեկչության ֆինանսավորման վերաբերյալ:

**(156-րդ հոդվածը լրաց. 21.06.14 ՀՕ-117-Ն)**

### **Հոդված 156.1. Արժութային արժեքների և (կամ) ըստ ներկայացնողի արժեթղթերի տեղափոխման կասեցումը**

1. Մաքսային մարմինները «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազոր մարմնից կամ իրավապահ մարմնից, օրենսդրությանը կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի նպատակով ստացված տեղեկությունների հիման վրա կասեցնում են ֆիզիկական անձի կողմից արժութային արժեքների և (կամ) ըստ ներկայացնողի արժեթղթերի տեղափոխումը և կազմում են արձանագրություն 2 օրինակից՝ օրենսդրությամբ կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված կարգով: Արձանագրության մեկ օրինակ հանձնվում է արժութային արժեքները և (կամ) ըստ ներկայացնողի արժեթղթերը տեղափոխող անձին, իսկ մյուս օրինակը պահպանվում է մաքսային մարմնի մոտ:

2. Մաքսային մարմինները արժութային արժեքների և (կամ) ըստ ներկայացնողի արժեթղթերի տեղափոխումը կասեցնելուց հետո անմիջապես տեղեկացնում են համապատասխան տեղեկությունները տրամադրած, սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված լիազոր մարմնին կամ իրավապահ մարմնին:

3. Եթե մաքսային մարմինն արժութային արժեքների և (կամ) ըստ ներկայացնողի արժեթղթերի կասեցման պահից 30 օրվա ընթացքում չի ստանում լիազոր մարմնի կամ իրավապահ մարմնի կայացրած որևէ որոշում (տեղեկացում), ապա մեկ օրվա ընթացքում որոշում է կայացնում արժութային արժեքների և (կամ) ըստ ներկայացնողի արժեթղթերի կասեցումը վերացնելու մասին:

4. Սույն հոդվածի 3-րդ կետում նշված դեպքում մաքսային մարմինը մեկ օրվա ընթացքում պատվիրված նամակով (հանձնման մասին ծանուցմամբ) տեղեկացնում է արժութային արժեքները և (կամ) ըստ ներկայացնողի արժեթղթերը տեղափոխող անձին: Սույն հոդվածի 3-րդ կետում նշված ժամկետում արժութային արժեքների և (կամ) ըստ ներկայացնողի արժեթղթերի կասեցումը լիազոր մարմնի կամ իրավապահ մարմնի կողմից վերացնելու մասին որոշում (տեղեկացում) ստանալու դեպքում կամ իրավապահ մարմնի կողմից կասեցված արժութային արժեքների և (կամ) ըստ ներկայացնողի արժեթղթերի վրա կալանք կիրառելու դեպքում մաքսային մարմինը մեկ օրվա ընթացքում պատվիրված նամակով (հանձնման մասին

ծանուցմամբ) տեղեկացնում է արժութային արժեքները և (կամ) ըստ ներկայացնողի արժեթղթերը տեղափոխող անձին: Կասեցված արժութային արժեքների և (կամ) ըստ ներկայացնողի արժեթղթերի կասեցումը վերացնելու դեպքում նամակում պետք է նշվեն արժութային արժեքների և (կամ) ըստ ներկայացնողի արժեթղթերի հանձնելու կարգը, ինչպես նաև սահմանված ժամկետներում դրանք չստանալու հետևանքները:

5. Կասեցված արժութային արժեքների և (կամ) ըստ ներկայացնողի արժեթղթերը ենթակա են պահպանության դրանց տեղափոխումը կասեցրած մաքսային մարմնի կողմից՝ օրենսդրական կամ գերատեսչական ակտի հիման վրա:

6. Հանձնման ենթակա կասեցված արժութային արժեքների և (կամ) ըստ ներկայացնողի արժեթղթերի պահպանման առավելագույն ժամկետը կազմում է չորս ամիս, որի ընթացքում անձի կամ նրա լիազոր ներկայացուցչի կողմից արժութային արժեքները և (կամ) ըստ ներկայացնողի արժեթղթերը չպահանջվելու դեպքում դրանք դառնում են պետության սեփականությունը՝ օրենսդրության համաձայն:

7. Սույն հոդվածի 6-րդ կետով նախատեսված ժամկետը հաշվարկվում է փոստային առաքանու վրա նշված հանձնման օրվանից կամ մաքսային մարմնի կողմից փոստային առաքանու հանձնման անհնարիության մասին ծանուցման ստացման օրվանից:

**(156.1-րդ հոդվածը լրաց. 21.06.14 ՀՕ-117-Ն)**

### **Հոդված 156.2. Մաքսային մարմիններին և ծառայողներին պատասխանատվությունից ազատելու հիմքերը**

1. Իրենց գործառույթներն իրականացնելիս մաքսային մարմինները և ծառայողները չեն կարող ենթարկվել քրեական, վարչական կամ այլ պատասխանատվության սույն օրենսգրքով նախատեսված փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում օրենսդրությամբ իրենց պարտականությունները պատշաճ կատարելու դեպքում:

**(156.2-րդ հոդվածը լրաց. 21.06.14 ՀՕ-117-Ն)**

### **Հոդված 157. Մաքսային մարմինների կողմից արժութային հսկողության հետևանքով բացահայտված իրավախախտումների համար պատասխանատվությունը**

Մաքսային մարմինների կողմից արժույթային հսկողության հետևանքով բացահայտված Հայաստանի Հանրապետության արժույթային օրենսդրության խախտումների դեպքում խախտումներ կատարած անձինք կրում են պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

### **Հոդված 189. Մաքսային կանոնների խախտումը**

1. Մաքսային կանոնների խախտում է համարվում անձի կողմից կատարված անօրինական գործողությունը կամ անգործությունը, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսդրությամբ և մաքսային ոլորտին առնչվող Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային հսկողության և մաքսային ձևակերպման սահմանված կարգի դեմ, և որի համար սույն օրենսգրքով նախատեսված է պատասխանատվություն:

2. Ֆիզիկական և պաշտոնատար անձինք մաքսային կանոնները դիտավորյալ կամ անզգուշորեն խախտելու համար ենթակա են պատասխանատվության:

### **Հոդված 190. Մաքսային մարմնի պաշտոնատար անձի կարգադրությանը կամ պահանջին չենթարկվելը, նրան վիրավորանք հասցնելը, սպառնալը, նրա նկատմամբ բռնություն գործադրելը**

1. Մաքսային մարմնի պաշտոնատար անձի օրինական պահանջը դիտավորյալ չկատարելը՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանքի նշանակում՝ 10,000 դրամի չափով:

2. Պաշտոնական պարտականությունները կատարելիս մաքսային մարմնի պաշտոնատար անձին վիրավորանք հասցնելը, նրա նկատմամբ բռնություն գործադրելը կամ սպառնալիքը, եթե իրավախախտողի գործողությունները չեն առաջացնում քրեական պատասխանատվություն՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ 20,000 դրամի չափով:

**Հոդված 194. Մաքսային հսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերը մաքսային մարմին չներկայացնելը**

Սահմանված ժամկետում մաքսային մարմիններին ապրանքների և տրանսպորտային միջոցների վերաբերյալ մաքսային հայտարարագիր չներկայացնելը, ինչպես նաև մաքսային հսկողություն իրականացնելու համար ապրանքների և տրանսպորտային միջոցների վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելը՝ անկախ գրավոր հայտարարագիր ներկայացնելուց՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ 50,000 դրամի չափով:

**(194-րդ հոդվածը փոփ. 22.12.10 ՀՕ-25-Ն)**

**Հոդված 202.1. Մաքսային սահմանով ահաբեկչության ֆինանսավորմանն ուղղված կամ հանցավոր ճանապարհով ստացված արժույթի կամ ըստ ներկայացնողի արժեթղթերի տեղափոխումը**

1. Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ահաբեկչության ֆինանսավորմանն ուղղված կամ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի իմաստով հանցավոր ճանապարհով ստացված արժույթի կամ ըստ ներկայացնողի արժեթղթերի տեղափոխումը հանցագործության հատկանիշների բացակայության դեպքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ այդ արժույթի չափով կամ ըստ ներկայացնողի արժեթղթի անվանական արժեքի կամ դրանով տրվող հանձնարարության գումարի չափով:

**(202.1-րդ հոդվածը լրաց. 21.06.14 ՀՕ-117-Ն)**

**Հոդված 203. Ապրանքները և տրանսպորտային միջոցները չհայտարարագրելը կամ դրանց հայտարարագրելը ոչ իրենց անվանմամբ**

1. Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները և տրանսպորտային միջոցները չհայտարարագրելը կամ ոչ իրենց անվանմամբ հայտարարագրելը կամ հայտարարագրման ժամանակ ոչ ճշգրիտ տեղեկություններ նշելը՝

- որի արդյունքում չի առաջանում մաքսային վճարների (բացառությամբ մաքսավճարի) պակաս հաշվարկում կամ չհաշվարկում, ինչպես նաև ոչ

սակագնային կարգավորման միջոցների չկիրառում՝ հանցագործության հատկանիշների բացակայության դեպքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ 50 հազար դրամի չափով,

- որի արդյունքում առաջանում է մաքսային վճարների պակաս հաշվարկում կամ չհաշվարկում՝ հանցագործության հատկանիշների բացակայության դեպքում՝

առաջացնում է չհաշվարկված կամ պակաս հաշվարկված մաքսային վճարների գանձում օրենքով սահմանված կարգով, ինչպես նաև տուգանք՝ այդ մաքսային վճարների 50 տոկոսի չափով,

- որն առաջացնում է ոչ սակագնային կարգավորման միջոցների չկիրառում՝ հանցագործության հատկանիշների բացակայության դեպքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ այդ ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային արժեքի չափով,

- որի արդյունքում չեն առաջանում մաքսային վճարներ (բացառությամբ մաքսավճարի), սակայն կատարված խախտման արդյունքում մաքսային հայտարարագրում արտացոլվել են ապրանքների արտահանման երկրում կամ Հայաստանի Հանրապետությունում ձեռք բերված և մաքսային սահմանով տեղափոխված կամ տեղափոխվող ապրանքների ձեռքբերման արժեքներից կամ քանակներից բարձր կամ ցածր արժեքներ կամ քանակներ՝ հանցագործության հատկանիշների բացակայության դեպքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ այդ ապրանքների մաքսային արժեքի 10 տոկոսի չափով:

**(203-րդ հոդվածը խմբ. 05.12.12 ՀՕ-224-Ն)**